ՇՈՒՇԱՆ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ
(ԵՊՀ)

ՀԱՆԲԱԼԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՍՈՒՖԻԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԻԲՆ ԱԼ-ՋԱՈՒԶԻԻ «ՍԱՏԱՆԱՅԻ ԽԱՐԴԱՎԱՆՔՆԵՐԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

Իսլամի տարածումն ու մուսուլմանական համայնքի ընդլայնումը 8-րդ դարի կեսից ուղեկցվում է իսլամական սոցիալական նորմերի և կրոնա-իրավագիտական համակարգի ձևավորմամբ: Մուսուլմանական օրենքը (շարիաթ) հասկանալու և մեկնաբանելու համար ստեղծվում է ֆիկհ հասկացությունը՝ իսլամական կրոնաիրավագիտությունը, որի դրույթների կիրառման շուրջ ձևավորվում են տարբեր ուղղություններ/ դպրոցներ:

8-րդ դարի վերջին և 9-րդ դարի սկզբին իսլամում կրոնա-իրավագիտական դպրոցների բյուրեղացմանը զուգահեռ մուսուլմանական համայնքի սոցիալ-քաղաքական խնդիրների, կրոնական կյանքի բարդացման, գաղափարական և հոգևոր փնտրտուքների և այլ կրոնա-փիլիսոփայական համակարգերի ազդեցության արդյունքում առանձնանում է նաև ասկետա-միստիկական ուղղություն: Այս ժամանակաշրջանում սուֆիականություն և սուֆի տերմինները դեռ լայն գործածություն չունեին, դրանց փոխարեն առավելապես կիրառվում էին զուհդ (ասկետականություն, աշխարհից հրաժարում), զահիդ (ասկետ) և աբիդ (երկրպագող, ճգնավոր) եզրույթները: Ավելի ուշ սուֆիականության տեսության և պրակտիկաների մշակումը, սուֆիական դպրոցների առաջացումը հանդիպում է սուննի իրավագետների, մասնավորապես հանբալիական ուղղության ներկայացուցիչների դիմադրությանը[1]:

---

[1] Հանբալիականությունը սուննիական կրոնաիրավագիտական չորս դպրոցներից մեկն է, հիմնադիրն է աստվածաբան և իրավագետ Ահմադ իբն Հանբալը (780 – 855թթ.): Այս ուղղության ներկայացուցիչները մուսուլմանական

Մուսուլմանական միստիցիզմի, մասնավորապես՝ սուֆիականության տեսության և պրակտիկայի վերաբերյալ հանբալիականության և հանբալիների դիրքորոշման խնդրին անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ, ինչպես օրինակ Ի. Պ. Պետրուշևսկին, Վ. Վ. Նաումկինը, Գ. Մ. Կերիմովը, Ա. Կնիշը, Ի. Գոլցիերը, Ջ. Մակդիսին և այլք: Իսլամագիտության մեջ այս հարցի շուրջ երկու հիմնական տեսություններ են ձևավորվել: Առաջինի հեղինակը Ի. Գոլցիերն է, որի տեսությունը հանգում է նրան, որ հանբալիական մազհաբն իր հիմնադրումից ի վեր (9-րդ դարի երկրորդ կես) և մասնավորապես՝ 10-11-րդ դարերում հանդես է եկել որպես սուֆիզմի անհաշտ հակառակորդ[2]:

Մյուս տեսության հեղինակը ամերիկացի արևելագետ Ջորջ Մակդիսին է, որը հրաժարվում է սուֆիզմը հակադրել հանբալիականությանը՝ պնդելով, որ հանբալի իրավագետները քննադատում էին ոչ թե սուֆիականությունն ընդհանուր առմամբ, այլ շեղումներն իրական սուֆիզմից[3]: Վերջինս մի շարք հանբալի հեղինակների, այդ թվում Իբն Ակիլին, Իբն Ջաուզիին, Իբն Թայմիյային ներկայացնում է որպես սուֆիներ՝ հղում անելով այն փաստին, որ նրանց անունները հանդիպում են սուֆիական հաղորդողների շղթաներում: Համաձայն Մակդիսիի՝ այս երկու տեսությունները ոչ միայն չեն բացառում միմյանց, այլ նույն իմացաբանական և սոցիալական արմատներն ունեցող երևույթներ են՝ եթե հաշվի առնենք, որ ինչպես սուֆիական, այնպես էլ հանբալիական պրակտիկան ստեղծվել է Ղուրանի տեքստի խորը ուսումնասիրության և վերլուծության արդյունքում: Սուֆիները,

---

իրավունքի առաջնային աղբյուրներ են համարում Ղուրանը, Սուննան և մարգարեի զինակիցների իրավական կարգադրությունները: Տե՛ս Laoust H., “Hanabila”, The Encyclopedia of Islam, Vol. 2, Brill E. J., Leiden, 1986, p. 158-162.

[2] Кныш А. Д., “Ханбалитская критика суфизма” (по материалам «Талбис Иблис» Ибн ал-Джаузи»), Письменные памятники и проблемы итории культуры народов Востока. XVIII годичная научная сессия ЛО ИВ АН СССР (доклады и сообщения), 1983-1984, Часть 1, Москва, 1985, с 170.

[3] Makdisi G., “The Hanbali school and sufism”, Humaniora Isamica, Vol. 2, 1974, p. 60-62.

ինչպես և հանբալիները «Ահլ ալ-Հադիս[4]» խմբից էին, ովքեր մուսուլմանական ավանդույթի տառին և ոգուն խստորեն հետևելու կողմնակիցներ են՝ ի տարբերություն ռացիոնալ մութազիլիների[5]:

Սուֆիականության տեսության և պրակտիկաների նկատմամբ հանբալիականության և հանբալի գիտնականների դիրքորոշման վերաբերյալ հարուստ հետազոտական նյութ է Իբն ալ-Ջաուզիի «Թալբիս Իբլիս» (Սատանայի խարդավանքները) աշխատությունը: Աբդ ալ-Ռահման իբն Ալի իբն Մուհամմադ աբու ալ-Ֆարաջ Իբն ալ-Ջաուզին սուննիական իսլամի հանբալիական դպրոցի հետևորդ էր, իրավագետ, պատմաբան, աստվածաբան և քարոզիչ, եղել է Բաղդադի հանբալիների առաջնորդը, վայելել ժամանակաշրջանի խալիֆների և վեզիրների հովանավորությունը, ուսուցչական գործունեություն է ծավալել՝ Բաղդադում ղեկավարելով երկու մադրասա: Այլախոհների դեմ պայքարի վերաբերյալ իր մտքերն Իբն ալ-Ջաուզին շարադրել է «Սատանայի խարդավանքները» աշխատության մեջ, որտեղ հեղինակը քննադատել է մուսուլմանական հասարակության գրեթե բոլոր շերտերի և կրոնաիրավական ուղղությունների՝ խարիջիների, բատինիների, մութազիլիների, կարմատների, իսմայիլիների, փիլիսոփաների և սատանայի այլ «զոհերի» պատկերացումները: Աշխատության մեծ մասը նվիրված է սուֆիների և նրանց պրակտիկայի հերքմանը, քանի որ հավանաբար Իբն ալ-Ջաուզին հենց սուֆիզմից էր զգում սուննիական իսլամի հիմնական վտանգը:

---

[4] Ահլ ալ-Հադիսը («Հադիսի հետևորդները»/āhl al-ḥadīṯ) 8-րդ դարում իսլամում ձևավորված ուղղություն է, որի հետևորդները մերժում էին կրոնաիրավական հարցերում ցանկացած նորարարության կիրառում և հետևում էին միայն Ալլահի գրքին (Ղուրան) և Մարգարեի Սուննային: Նրանց հակադրվում էին «Կարծիքի հետևորդները» (āṣḥāb al-rāy), ովքեր իրավական հարցերում հենվում էին սեփական կարծիքի և տրամաբանական դիտարկումների վրա: Մանրամասն տե՛ս՝ Ислам, Энциклопедический словарь, отв. ред. Прозоров С. М., Главная редакция восточной литературы, Москва, «Наука», 1991, с. 24-25.

[5] Makdisi G., նշվ. աշխ., էջ 62:

«Թալբիս Իբլիս»-ը՝ ունենալով մեծ շեշտադրում սուֆիականության քննադատության վրա, նաև բացառիկ և կարևոր աղբյուր է նրանց տեսության, սովորույթների և պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվության ստանալու համար: Հեղինակը սուֆիներին քննադատելիս հենվում է Ղուրանի դրույթների, Սուննայի, Սալաֆների (նախնիների) խոսքերի վրա: Առանձին հարցերի՝ մասնավորապես սուֆիական ծեսերի ժամանակ իրականացվող երգեցողության և պարի շուրջ դիտարկումներ անելիս հանդիպում են հղումներ սուննիական կրոնաիրավական դպրոցների հիմնադիրներին՝ Ահմադ իբն Հանբալին (մահ. 855թ.), Ալ- Շաֆիին (մահ. 820թ.), Աբու Հանիֆային (մահ. 767թ.) և Մալիք իբն Անասին (մահ. 795թ.): Մյուս մազհաբների գրքերը կամ դրանց հիմնադիրների խոսքերը մեջբերվում են միայն այն դեպքում, եթե դրանք չեն հակասում Ահմադ իբն Հանբալի մտքերին:

Սուֆիների նկատմամբ սատանայի խաբեությունները ներկայացնելու համար Իբն ալ-Ջաուզին կարևորում է այդ խմբի ծագման, դրա ճյուղերի և նրանց գործերի քննարկումը: «Մարգարեի ժամանակ մարդկանց կոչում էին հավատ ունեցող (mu’min) կամ իսլամ դավանող (muslim): Ավելի ուշ ասկետ (zāhid) և երկրպագող (ʿābid) անունները սկսեցին կիրառվել աշխարհիկ կյանքից հրաժարվողների համար[6]: Հարկ է նշել, որ հեղինակը այս երկու խմբերի քննադատությանն անդրադառնում է աշխատության առանձին գլխում՝ այդպիսով չնույնացնելով զահիդներին և ասկետներին սուֆիների հետ:

Համաձայն «Թալբիսի»՝ «սուֆի» տերմինը սկսել է կիրառվել 8-րդ դարում, և ըստ այս անունն իրենց վերագրողների սուֆիզմ (tasawwuf) նշանակում է ինքնակատերալագործում (riyāḍa an-nafs), դիմադրություն բնությանը (mujaddada), ինչը ստիպում է զսպել արատները և պարտադրում այնպիսի առաքինություններ, ինչպիսիք են ասկետականությունը (zuhd), համբերությունը (ṣabr), անկեղծությունը (ikhāls),

[6] Ibn al-Jawzi, Talbīs Iblīs, Dar al-Qalam, Beirut,1982, p. 157.

ճշմարտացիությունը (ṣidq) և այլ որակներ, որոնք արժանի են գովասանքի այս աշխարհում և այլ պարգևների հաջորդ կյանքում[7]:

Իբն ալ-Ջաուզին նշում է, որ առաջին սուֆիները հավատարիմ էին վերը նշվածին, սակայն ավելի ուշ սատանան խաբել է նրանց: Ամեն հարյուրամյակը մեկ մեծանում էր սատանայի ցանկությունը նրանց (սուֆիների) նկատմամբ գերիշխանության: Սատանան խաբել է նրանց այնքան, մինչև վերջնականապես ենթարկեցրել է իր խարդավանքներին:

Սատանայի՝ սուֆիների հանդեպ կիրառած խարդավանքների էությունն այն է, որ նա նրանց հեռացրել է գիտությունից և ներշնչել, որ պետք է ձգտել գործողությունների, այլ ոչ գիտելիքի: «Երբ նա մարեց նրանց համար գիտելիքի լույսը, նրանք ընկան մոլորության մեջ: Այս մարդկանց նպատակներն, իրապես, լավն էին, սակայն նրանք շեղվել են ճշմարիտ ուղուց»[8]:

Գիտելիքից և աշխարհիկ կյանքի բարիքներից հեռացման արդյունքում սուֆիները դիմեցին սովի (al-ju'), աղքատության (al-faqr), գայթակղության (al-waswās): Որոշ սուֆիներ ծայրահեղ սովի պատճառով տեսիլքներ էին ունենում: Նրանք պատկերացնում էին, թե տեսել են Ալլահին: Այս ամենը Իբն ալ-Ջաուզին դիտարկում է անհավատության և նորարարության միջակայքում: Ապա սուֆի հեղինակները սուֆիականությունը ներկայացրին իբրև իսլամական մտքի առանձին դպրոց, տվեցին դրան որոշ տարբերակիչ հատկանիշներ, ինչպես կարկատված հագուստ կրելը, երաժշտություն լսելը, պարելը, ծափահարելը և այլն, ապա իրենց վերագրեցին բացարձակ մաքրություն (al-tahāra):

Համաձայն «Թալբիսի» հեղինակի՝ այս ամենի հետևանքով սուֆիների և ճշմարիտ գիտնականների միջև ճեղքը ավելի մեծացավ, այնքան, որ նրանք սուֆիզմը սկսեցին համար կատարյալ գիտելիք, ներքին գիտելիք (bāṭin), մինչդեռ շարիաթով տրված գիտելիքը

---

[7] Ibn al-Jawzi, նշվ. աշխ., էջ 157:

[8] Նույն տեղում, էջ 158-159:

դիտարկեցին որպես ակնհայտ (ḏāhir) գիտելիք: Իբն ալ-Ջաուզին նշում է, որ սատանան շարունակեց խաբել սուֆիներին, մինչև վերջիններս իրենց սուննան, հադիսները և թաֆսիրներն ունեցան, որոնք համապատասխանում էին իրենց սկզբունքներին: «Հատկանշական է, որ նրանք ուշադիր էին, թե ինչ են ուտում, բայց ուշադիր չէին, թե ինչպես են մեկնաբանում Ղուրանը»[9]: Ղուրանի, ինչպես նաև Ալլահի, Ֆիկհի և Շարիաթի վերաբերյալ սուֆիների պնդումների հերքումը ևս մեկ անգամ փաստում է Իբն ալ-Ջաուզիի քննադատական վերաբերմունքը նրանց նկատմամբ:

Իբն ալ-Ջաուզին այս կերպ ներկայացնում է վաղ սուֆիների գաղափարախոսության աստիճանական փոփոխությունը, Ղուրանին հակասող դրույթներով դրա համալրումը, վնասակար նորարարությունների կիրառումը՝ այդպիսով հանդես գալով սուֆիզմի՝ որպես իրեն վերագրվող առանձին ատրիբուտներ, հատուկ տերմինաբանություն, տեսություն և պրակտիկա ունեցող առանձին ուղղության դեմ: Իբն ալ-Ջաուզին քննադատում է նրանց գրեթե բոլոր գործողությունները, նրանց ապրելավայրերը, հարստությունից հրաժարումը, աղոթքում սուֆիների մտցրած փոփոխությունները, ծիսական ծայրահեղացված մաքրության անհրաժեշտությունը, պատառոտված բրդյա հագուստ կրելը, քիչ ուտելը և սառը ջուր չխմելը (որոշ դեպքերում մսից հրաժարվելը), երգելը, երաժշտություն լսելը, էքստազի մեջ հայտնվելը, ծիսական պարերը, ծափահարելը, ուրբաթօրյա աղոթքից հրաժարվելը և այլն: Համեմատության համար նշենք, որ մյուս ուղղությունների քննադատությունը սահմանափակվում է մեկ-երկու օրինակով, իսկ սուֆիզմին հատկացված է աշխատության զգալի հատվածը՝ գրեթե կեսը:

Սա էլ բացատրվում է այն հանգամանքով, որ 12-րդ դարում միստիցիզմը դարձել էր սուննիականության հիմնական մրցակիցներից մեկը, քանի որ այն գրավում էր շատ շարքային սուննիների, որոնցից ոմանք արդյունքում դուրս էին գալիս իրենց մազհաբների

[9] Ibn al-Jawzi, նշվ. աշխ., էջ 158-159:

աստվածաբանների ազդեցությունից: Սովորական սուննիների վրա մեծ տպավորություն էին գործում նաև սուֆիական ծիսակարգերը. հնոտիներ հագնելը, զիքրը, սաման, որոնք հաճախ ուղեկցվում էին սուննի իսլամում արգելված երգեցողությամբ և պարերով, շեյխի (ուսուցչի) պաշտամունքը սուֆիական եղբայրություններում, բարեգործական գործողությունները թաքցնելը՝ աշխարհիկ կյանքում փառքից խուսափելու համար և այլն:

Իբն ալ-Ջաուզիի հարձակումների առարկան նաև սուֆիական պրակտիկաներն են. սուֆիական սովորություններն ու ծեսերը նա հայտարարում է հերետիկոսական նորարարություններ (bidʿa)[10]: Ուշ շրջանի սուֆիների մոտ Իբն ալ-Ջաուզիի պնդմամբ, այդ պրակտիկան հանգեցնում է շարիաթի հիմունքների լիարժեք անտեսման և ամենաթողության քարոզի: Շարիաթը՝ մուսուլմանական օրենքը, ըստ հանբալիական իրավագիտության, հավիտենական է, Ալլահից է տրված, հետևաբար բացարձակ, ճշմարիտ և հաստատագրված օրենք է, և դա չկատարելը նշանակում է մեղք գործել Ալլահի առաջ, ինչն արդեն պատժելի է:

Իբն ալ-Ջաուզին առանձնակի քննադատության է արժանացնում նաև այն սուֆի հեղինակներին, որոնք իրենց աշխատություններում կամ կենսագրական երկերում չորս ուղղադավան խալիֆներին ներկայացնում են որպես միստիկներ: Սա արվում էր սուֆիզմի հեղինակությունը մուսուլմանական համայնքի աչքում բարձրացնելու համար: Այդ մեթոդը կիրառել են նաև ուշ շրջանի սուֆի կենսագիրները, ուստի զարմանալի չէ, որ նրանց երկերում սուֆիզմի հակառակորդներ Իբն ալ-Ջաուզին և Իբն Թայմիյան դարձել են նրանց հեղինակություններից[11]:

---

[10] Իբն ալ Ջաուզին սահմանում է «բիդան» որպես մի պրակտիկա, որն ի սկզբանե չի կիրառվել, սակայն ավելի ուշ ներմուծվել է վնասակար նորարարության արդյունքում: Բիդան մեծ մասամբ հակասում է Շարիաթին, քանի որ դրանով ենթադրվում է, որ այն (Շարիաթը) թերի է և կարիք ունի լրացման կամ որոշ բաների պակասեցման:

[11] Кныш А., նշվ. աշխ., էջ 174:

Այսպիսով, Իբն ալ-Ջաուզիի «Թալբիս Իբլիս»-ի ուսումնասիրությունը թույլ է տալիս նշել, որ սուֆիզմի հանբալիական քննադատությունն ուներ ֆունդամենտալ բնույթ: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ սուֆիականությունն արդեն 12-րդ դարում դարձել էր սուննիականության համար մեծ մրցակից: Իբն ալ-Ջաուզիի մերժողական դիրքորոշումն իսլամում ցանկացած նորարարության հարցում բնականորեն պայմանավորված էր Աբբասյան խալիֆայության անկման և խալիֆայությունում մշտական մրցակցության մեջ տարբեր ուղղություններից միակն ու մաքուրը պահպանելու անհրաժեշտությամբ: Այդ ուղղությունը, համաձայն Իբն ալ-Ջաուզիի, պետք է լիներ հանբալիականությունը, քանի որ հանբալիները հանդես էին գալիս նորարարությունից իսլամի մաքրության պահպանության դիրքերից, մինչդեռ սուֆիները, ընդհակառակը, պնդում էին միստիցիզմի հավիտենական գոյությունն իսլամում:

SHOUSHAN KYUREGHYAN
(YSU)

HANBALI SCHOOL ATTITUDE TO SUFISM IN THE CASE OF IBN AL-JAWZI'S "DEVIL'S DECEPTIONS"

The main purpose of this paper is to review and analyze Hanbali School attitude towards Sufism and the Devil’s deceptions in the relevance of Sufis according to ‘Ibn al-Jawzī’s “Talbīs Iblīs”. Talbīs Iblīs is one of the major works of Hanbali polemic where the author vigorously defends the Sunnah against negative innovations. Most of the work is devoted to the denial of the Sufis and their practice.

The article attempts to summarize the development and the changes in Sufi theory and practices. Then it outlines that the Hanbali criticism of Sufism was of a fundamental nature and directed against the essence of Sufi teaching, not against some deviations from orthodox Isl